

Ն. ՄԱՌ *). ԺՈՂՈՎԱԾՈՅՔ ԱՌԱԿԱՑ ՎԱՐԴԱՆԱՅ
ՆԻԻԹՔ ԱՌ Ի ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՑ ԴԸՊ-
ՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ.

Մասն Ա. Հետազոտութիւն. Ս. Պետերբ. 1899. տպ. կայս.
գիտ. ճեմ. ՌՅԽԳ, եր. խա+594 8°.

Մասն Բ. Բնադիր. Ս.-Պետերբ. տպ. Սկրոբիտովի. 1894.
եր. ժՁ+344. 8°.

Մասն Գ. Յաւելութիւն. Նկարագրութիւն էջմիածնի
10 ձեռագրոց և ցանկ. արաբական և լրացուցիչ
հայ բնագիրն «վասն խաբող աղուխուն և չարու-
թեան նորա» հանդերձ ուստերէն թարգմանութեամբ:
Ս. Պ. տպ. կայսեր. գիտ. ճեմար. 1894. եր. ժ+
202 8°:

Մի նոր գրական աշխարհ, մի մոռացութեան տը-
րուած հնադարան է բաց անում յարգելի Ն. Մառը մեր
առաջև: Հասկանալի կը լինի մեր ասածն, եթէ սկըզ-
բից և եթ յօտուենք, որ այս եռահատոր երկի առա-
ջին վերնագիրը չէ բովանդակում ամբողջ նիւթը, աւե-
լի յարմար և բովանդակութեան համապատասխան կը
լինէր թերևս յեղաշրջել երկու վերնագիրը. «Նիւթը առ ի
պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերենի.
Ժողովածոյք առական վարդանայ» Թէպէտ և հետա-

*) Н. Маръ: Сборники притчъ Вардана.

Материалы для исторіи средневѣковой армянской
литературы.

Часть I. ИЗСЛѢДОВАНИЕ. С. Петербургъ 1899 тип.
Академ.

Часть II. ТЕКСТЪ.—С. П. 1894 типг. Скороходовъ.

Часть III. ПРИЛОЖЕНІЯ. Описаніе 10 Эчмиадзин-
скихъ рукописей съ указателемъ, арабскій и
дополнительные армянскіе тексты, армянскій
текстъ съ переводомъ сказки «Лиса и волеъ
въ западнѣ»,—С. Петерб. 1894. типогр. Импе-
рат. Акад. наукъ.

Часть I. ст. XLI+594.

Часть II. ст. XVI+344.

Часть III. ст. X+202.

զօտութեան շնորհ եղած են միմիայն Վարդանայ առաւելների ժողովածոյք, բայց սա շոշափում է հայոց ամբողջ միջակ գրականութիւնն և անցնում իսկ հնի, դասականի, և նորի, ռամկականի, սահմանները: Մեր նպատակն է ծանօթացնել «Լուսնայի» ընթերցողներին այս գրական նշանաւոր երևոյթի հետ, ինչքան որ կը ներեն հանդիսիս սուղ էջերը, դրանից աւելին այլ տեղի և այլ ժամանակի գործ է: Սակայն դիւրին է ասել ծանօթացնել հետազօտութեան հետ, իսկ հնարաւոր է արդեօք. մերձաւորապէս չորսհարիւր պրակների և անթիւ ծանօթութիւնների մէջ այնքան նորութիւններ կան, այնքան մանրակրկիտ եւ մանրախօյզ հետազօտութեան գեղեցիկ արգասիքներ, որ չը գիտես թէ ո՞րն առաջ բերես և ո՞րը թողնես. ուստի տրուած ծանօթութիւնն ևս սահմանափակ պիտի հասկացուի: Երկասիրութեան առաջին հատորը, որ յարգելի գիտնականի մագիստրոսական շրջագրութիւնն է կազմում, մի կտտարեալ շտեմարան է հայկական պատմութեան և գրականութեան, խնդիրներին վերաբերեալ նիւթերի, որից յետագայք պիտի օգտուեն իրենց առանձնական քննութիւնների համար: Իմենք սակայն բուն խնդրին, որպէս զի վայրապար գովաբան չերևինք:

Ձարմանալի չէ արդեօք երևոյթս մեր մէջ, որ դարուս վերջին կիսիցն սկսած մոռացութեան ենք տուել այն գրականութիւնը, որով դեռ ապրում էինք առաջին կիսուն և մեր մէջ շատ աւելի անձինք կան, որոնք ճանաչում են հինգերորդ դարու հեղինակներին և բոլորովին անտեղեակ են «աղուէսագրքի» մասին կամ չեն ճանաչում միջնադարեան բանաստեղծների այն բազմանդամ հոլլն, որոնց երգերը դեռ ևս մեր ծերունիների բերանումն են: Թէպէտ և մեր ազգային ինքնաճանաչութեան համար մեծ նշանակութիւն ունեցաւ այս յետաշրջումն, որ մենք գլխովին Միլիթարեաններին ենք պարտական, բայց արգասաւոր չեղաւ այդ մեր նորագոյն գրականութեան համար, որ արմատ ձգելու տեղ չը գտնելով մեր հնագոյն գրականութեան հողի վրայ, անծանօթ մնալով միջնադարեանին, ստի-

պուլեցաւ խարխափել և օտարանալ, այդ վիճակի մէջ իսկ գտնուում է նա ցայսօր: Քանիցս առիթ ենք ունեցել պնդելու, թէ մեր միջակ գրականութիւնը վայրենացեալ և ռամկացեալ մի գրականութիւն չէ, ինչպէս ներշնչել են մեզ Մխիթարեանք, և թէ մենք լոյս աշխարհ պիտի հանենք փողիների տակից այդ դանձերը, սակայն մեր ձայնը քիչ արձագանք է գտել. ահա, վերջապէս, մի բոլորովին անսպասելի զարկ է ստանում մեր միջակ գրականութիւնը և այն արտաքուստ, Պետերբուրգի համալսարանի հայագէտ ուսուցչապետ Ն. Մառից: Մի կողմը թողնելով այս մեծակշիռ վաստակի բոլոր գիտնական արժանիքները, մենք ուրախ ենք նրա մի երկրորդական, հեղինակի նպատակից դուրս, ունենալիք ազգեցութեան վրայ: Այդ երկի շնորհիւ իւր պատուին պիտի հասնի մեր միջակ գրականութիւնը և ուղղակի ազգելով մեր նորագոյն գրականութեան վրայ, պիտի կենսունակութիւն տալ նրան: Առակախօսութիւնը, որ բոլոր նշանաւոր գրականութիւնների մէջ ունի իւր դասական ներկայացուցիչները, օտար չէ եղել և մեր գրականութեան, որի մէջ եղել են նշանաւոր առակախօսներ, որոնց երկերը դարեր շարունակ կենդանի են մնացել և ոչ միայն այդչափ, այլ նաև թարգմանուել են շրջակայ ազգերի լեզուներով և մտաւոր պաշար են մատակարարել նրանց: Մենք, որ հիանում ենք Փեգրոսներով, Լաֆոնտէններով և Կուլիովներով, ունեցել ենք այնպիսի մի առակախօս, որին թարգմանել են արաբերէն և վրացերէն, բայց ճանաչում էր արդեօք մեզնից որեւէ մէկը Ալգեկցի Վարդան երէցին, հաստատապէս կարող ենք ասել, թէ ոչ: Յիւրաւի մենք գիտէինք, որ կար մի հայ առակախօս, որին Վարդան էին անուանում, սա ապրում է ժԳ. դարում, երբ ծաղկում էր Մեծն Վարդան Արեւելցին կամ Վարդան պատմիչը, ուստի և առանց վարանելու սրան էին յատկացնում և այդ առակները: Այս մասին կասկածներ ու ենթադրութիւններ կային, սակայն ոչ մեր դպրութեան պատմագիր Զարբհանալեանը և ոչ մեր հնութեանց խորհամուտ Ալիշանը չէին ճանաչում այս առակախօս Ալգեկցի Վարդանին: Առանց վարանելու կա-

րող ենք ասել, որ յարգելի Մառին է պարտական Վարդանը իւր վերականգնութեամբ: Այն հռչակաւոր Վարդանը, որ ժԳ դարում անբաժան համոզուած իւր անմահութեան մասին, ասում էր.

«Այլ ինչ մանկունք Սիօնի, որ գայք յետ մեր յաշխարհի. զի ցանկամ տեսանել զձեզ և ոչ կարեմ զի հողացեալ եմ ի գերեզմանի. ապա գրաւիս խաւսիմ ընդ ձեզ մինչև ի հինգ և յսոթն ազգ և կամ հոգովս ի միջի ձերում»: Բայց այս խօսքերն ասողը բոլորովին մոռացուած էր ցարդ, նրան մի այլ անձի հետ էին միացրել և նրա փառքն այլ ոք էր վայելում: Արդեօք մարգարէացել էր Ալեքիցին, որ ինքը մինչև հինգ ազգ ծանօթ պիտի մնայ և մէկ էլ եօթն ազգից յետոյ կրկին պիտի ճանաչուի (1200 + 500 = 1700 և 1200 + 700 = 1900): Թէպէտ ժԳ դարում փալլող Վարդանների խնդիրը վախճանական լուծումն առած չէ, բայց այսօր լուսոյ պէս պարզ է, որ Մեծն Վարդան Արևելցին կամ Վարդան պատմիչն այլ է և քարոզիչ ու առակախօս Վարդան Ալեքիցին այլ: Ահա այն թանգազին և մանրախոյզ տեղեկութիւններն, որ առաջին անգամ փոշիով ծածկուած ձեռագրներէից յաջողել է հանելու յարգելի պ. Մառ: Հետազօտութեան վեցերորդ գլուխը նուիրուած է այդ Վարդանին, որից մենք քաղում ենք միայն եզրակացութիւնները: Հայ և օտար բանասէրներն ամէնն ևս չէին կորողանում զանազանել ժԳ դարում ծաղկող Վարդաններին, հ. Ալիշանը Վարդանանց պատմութեան հրատարակութեան (1862) յառաջաբանում զանազանում է երկու Վարդան. Մեծն Վարդան Արևելցի և Վարդան Բարձրբերդցի. հ. Ղ. Յովնանեան աւելի ճիշդ զանազանում էր երկու Վարդաններին, պատմագրին ու առակախօսին: Այս մթութեան մէջ էր խնդիրն, երբ պ. Մառ սկսաւ զբաղուել Վարդան առակախօսով և այսօր մենք կորող ենք վկայել, որ նա մեռելութիւնից կենդանացրել է մի շատ նշանաւոր մատենագիր և յաջողել է նրա ամբողջ կեանքը վերականգնել մեր առաջ: Թէպէտ և յարգելի գիտնականը հետազօտութեան 312

պրակում (եր. 285) մի կողմն է թողնում երկու Վարդաններից որք մեծ կոչուելու խնդիրը, բայց մեզ թուում է, որ հիմնուելով միմիայն Կիրակոսի վկայութեան վրայ կարելի է պնդել, որ Մեծն Վարդան՝ Արեւելցին էր կոչուում. նա թէ հեղինակաւոր հայր էր եկեղեցու և թէ աշխարհական իշխանութեան մօտիկ, իսկ այս վերջին պատճառս շատ հիմնաւոր է ժամանակակիցների համար նրան Մեծ կոչելու. Կիրակոսը գեղեցիկ կերպով ապացուցանում է այդ Մխիթար Գոշի վերաբերութեամբ, որին ժամանակակիցներն անգամ Մեծ Վարդապետ էին կոչում: Մեր միջակ գրականութեան շրջանում մակդիրներն առատ են և միշտ գերադրական, թերևս դա լատիներների ազդեցութիւնից է, ցայսօր իսկ Խոտլիայում ամենայն գովասանք գերադրական պիտի լինի, որ ազդէ. գրականն արդէն պարսաւ է: Այսպէս մեր միջնադարեան վարդապետները կոչուում էին մեծ, եռամեծ, եռամեծ փիլիսոփայ և այլն և այլն, զարմանալի՝ չէ ուրեմն, որ Վարդան Այգեկցին ևս լեռնորդներից մեծ կոչուած լինէր և նրա շարադրութիւնների վերնագրերն ևս եռամեծ վարդապետ մակդիրները կրէին: Մեր մատենագրութեան մէջ հոմանուն հեղինակներին շփոթելու օրինակներ շատ կան և քննական պատմութիւնը մեր դպրութեան դեռ ևս շատ Մովսէսներ, Եզնիկներ, Ղազարներ, Յովհաններ, Ստեփաննոսներ և Վարդաններ պիտի գատէ միմեանցից: Այս շփոթութիւնը շատ բնական էր հին ժամանակներում, երբ հազիւ թէ մի կենդրոն կար, ուր բոլոր հեղինակների շարադրութիւնները լինէին, ուստի ով մէկ Վարդան էր ճանաչում, նրան էլ վերագրում էր միւս Վարդանի գործերը:

Արդ՝ Վարդան առակախօսն Ասորիքի հայ գաղթավայրերիցն էր, Հալէպի շրջակայքից, ուր Մարաթա առունով գիւղեր շատ կան, որոնցից մէկի մէջ ծնուած էր Վարդանը: Սա ինքն իրեն քանիցս Մարաթացի է կոչում և բոլորովին հաւանական է եր. 292—293 ծանօթ. ա. արտայայտուած կարծիքն, որ այս նոյն անձն է Վարդան Մարաթացին: Ինչպէս թուում է հոգեւորա-

կտնի զաւակ էր Վարդանն և իւր առաջին կրթութիւնն ստացել է հայրենիքում, թերևս գիւղի քահանայի մօտ, իսկ ուսումն ստացել է Կիլիկիոյ հռչակաւոր Արքակաղնու վանքում, որի մասին ինքն է վկայում (Այս յուսման ժամանակն եղել ի սուրբ ուխտն յարքակաղնի)։ Արդևօք Վարդանը աշխարհական երէց էր, թէ վանական, պարզ չէ լիշատակուած, թէպէտ և առականքը գրելու ժամանակ վանական էր և անապատական ևս մեռաւ. հաւանական է թուում, որ Վարդանը սկզբանէ կուսակիցն կրօնաւոր էր և եթէ հոգեւական պաշտօն է վարել Դիուկում և Համիդում, այս պաշտօնը քահանայութիւն չէ եղել, այլ առաջնորդութիւն. որ հին հայերը ժառանգութիւն էին կոչում, մինչև վերջին ժամանակներս էլ Ս. Էջմիածնի դպրոցի սաները ժառանգաւորներ էին կոչուում և դպրոցը ժառանգաւորաց դպրոց։ Քահանայի ծուխիմասին «ընիկ ժառանգութիւն» դարձուածները չը կայգործածուած։ Վարդանի տրտունջն ևս, իմ կաքծիքով, պարզում է խնդիրը. «Վայ է զնա զոր իշխան և առաջնորդ կացուցանեն յայս չար և դառն ժամանակիս»։ Վարդանն առաջնորդ էր Դիուկում, ուստի և ստիպուած հեռացաւ իբրև խոտապահանջ քարոզիչ, որի առականքն երևի սպանում էին բարոյապէս իւր թեմի անիրաւ իշխանների։ Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և հայոց մէջ ճշմարտութիւն խօսողներն հալածուել են, ինչ զարմանք, եթէ առականօս Վարդանն ևս իւր թեմից հալածուէր, նոյնը պնդում է և յարգելի պ. Մաւր, սակայն այդ հալածուածների մէջ ինչո՞ւ է լիշում նանքրէս Լամբրոնացուն (եր. 297), մեր գիտութեամբ նա հալածուած չէ եղել, բայց ցանկացել է միշտ ուրիշներին հալածել, իսկ Լևոն թագաւորի երեսից ընկնելը մի ժամանակ դժուար թէ իրաւունք տար մեզ նրան ևս Մուշէի և Փարպեցու կարգը դասելու։ Լամբրոնացու պէս մարդիկը, որոնց համար ոչինչ բանի խտրութիւն չը կայ, չեն հալածուում սովորաբար։ Վարդանի հալածման սլառճառները թէև յայտնի չեն, բայց դիւրաւ գուշակելի են՝ ինքը ցաւով է լիշում այդ դէպքը, որովհետև ստիպուել է բաժանուել իւր գրքերէից։ Ինչ

Հաւանական է թուում, որ Վարդանի Հետ Ղազար Փարպեցու անցքն է կրկնուել: Իւր այս բնիկ ժառանգութիւնից բաժանուելը ծերութեան հասակումն է տեղի ունեցել, երբ աւելի դժուարին էր մի ապաստանարան գտնելը, ցաւում ենք, որ տեղիս սղութիւնը թոյլ չէ տալիս մեզ առաջ բերել այն մարգարտաշար տողերն, որոնց մէջ յարգելի գիտնականը նկարագրում է Վարդանի հոգեկան վիճակն իւր համար նոր բնակավայր ընտրելու, ցանկացողը թող կարդայ § 315. եր. 298—299: Իւր բարեկամ իշխաններից մէկի, արքայազն Պաղտինի ձեռնտուութեամբ Վարդան մտնում է Սև լերան վանքերից մինը. Այգիկ կամ Այգետի անապատն, ուր և սկսում է նրա հռչակաւոր գրական գործունէութիւնը, որի թուականը պահել է նա մեզ համար, Այգիկ տեղափոխուելու չորրորդ տարին էր 1212 թ., բայց նա այնտեղ աւելի ևս երկար է մնացել, ուստի և առել է իւր կոչումն, Վարդան Այգեկցի: Այս միջոցներին նա Կիլիկիա ևս ճանապարհորդել է, ինչպէս ենթադրւում է 1220 թ. Վարդանի թղթերից առ Անտիոքի Միքայէլ հայ եպիսկոպոսն երևում է, որ նա այդ թուղթը գրել է 1229 թ. Վարդանի հռչակն այնքան մեծանում է, որ նա կենդրոն է դառնում Սև լերան վանականութեան, նրա շուրջն են խմբւում նոր վանականներն և նրան են դիմում ծերունիք իրենց տարակոյսները փարատելու: Վարդանի ձայնը հնչում էր դեռ, երբ մողոյները (1222 թ.) աւերել էին Հայաստանն ու Փոքր Ասիոյ սահմանները, դրանից յետոյ դեռ ևս բաւական ժամանակ պիտի ապրած լինի նա: Վարդանը գրական պարագմունքն աստուածահաճոյ գործ էր համարում, ուստի և նորընծայ վանականներին խրատում էր շարունակ գրել և կարդալ. սրանով է բացադրւում և նրա գրուածքների բազմութիւնը, որոնք ամէնն էլ հոգեշահ երկեր են, մեկնութիւններ, խրատներ և քարոզներ: Վարդանի շարադրութեանց մէջ նշանաւորագոյնն է քսանւերկու գլխից բաղկացած խրատագիրը, որ նա գրել էր դեռ 1212 թ. Պաղտին թագաւորագնի խնդրով և վերստին խմբագրեց և ճոխացրեց Դրազարկում 1220 թ.: Հետաքրքրական

է այս խմբագրութեան յառաջաբանը, ուր հեղինակը պատմում է՝ թէ ինչ դժուարութիւններով է կարողացել հեղինակել սկզբի առակը 10 վաճառականների մասին: Վարդանի այս շարագրութիւնը գտնուում է սովորաբար Ոսկեփորիկների մէջ, բացի դրանից և առանձինն. սակայն յապաւումներով և յաւելուածներով. պ. Մառի կարծիքով, Վարդանը սիրում էր առակաւոր քարոզները իր և գրութեան մի եղանակ և թողել է մի քանի տեսակ մշակումն նոյն քարոզների, որոնցից թերևս շատերն ինքը խօսել է և այլք գրի են առել, բայց նա ինքը թողել է մի ժողովածու առակների հոգեշահ մեկնութիւններով հանդերձ: Ահա այս շարագրութեան է նուիրուած յարգելի գիտնականի ամբողջ հետազօտութիւնը, սակայն ինչպիսի հիմնաւորութեամբ, աղբիւրների և թարգմանութիւնների քննութեամբ և մանրախոյզ ու հմտօրէց ջանքով: Վարդան Այգեկցու հետ ծանօթացնելուց լետոյ դժուարին է կանգ առնել այլ ևս միւս խնդիրների վրայ, ուստի կրդոհանանք միայն հետազօտութեան 10 գլխերի եզրակացութիւնները թուելով:

Գլ. Ա. «Աղուեսագիրք» և արաբերէն «գիրք աղուեսի առակների» § 1—54.

Ի մի հաւաքելով բոլոր ցարդ յայտնի հրատարակութիւններն և յայտնուած կարծիքներն աղուեսագրի մասին, ապացուցանում է նախկին հետազօտիչների խարխափումն մթութեան մէջ և նիւթին անծանօթութիւնը: Աղուեսագրի հրատարակութիւնները միառմի յառաջ բերելուս (գլ. Գ. եր. 100) խուսափել է յարգելի գիտնականի աչքից մի հրատարակութիւն, որ պարզում է այն թիւրիմացութիւնը, թէ ինչպէս անգլիացի գիտնական Ջէկոբսը, կարող էր աղուեսագիրքը վերագրել Երեմիա վարդապետին: Ահա այդ հրատարակութեան վերնագիրը.

Աղուեսագիրք:

Որ գեղեցիկ առակաբանութեամբ խրատէ զմարդիկ զգուշանալ ի չարեաց և գործել զբարիս:

Սրարեալ յՆրեմեայ վարդապետէ արեւելոյ:

Տպագրեալ

Ի պատրիարքութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն
Կարապետի ամենապատիւ և վեհափառ Արք Եպիսկոպոսի
1827 Յօրթագիրդ ՌՄՀԶ

Ի տպարանի Պօղոսի արապեան Ապուկէիսցւոյ:

Փոքրագիր 176 երեսից բաղկացած, բովանդակում է 166 ա-
ռակ. վերնագիրն է „Բարոյական առակք“ 1. Թագաւոր մի
կազմեաց սեղան դեսպանաց... 166 Սնապարծ իտալացի մի՝
որ եկեալ էր ի Կոստանդնուպօլիս...

Այս հրատարակութեան մէջ Արեւելցի Երեմիա վար-
դապետն է ահա, որ մոլորեցրել է հետախուզներին. տես
եր. 2

Այս գլխի մէջ անդրդուելի փաստերով ապացուցած
է արաբական աղուեսագրքի հայերէնից թարգմանուած
լինելն, որով և հերքուած է ցարգ տիրող կործիքը, թէ
հայերէնն է թարգմանուած արաբերէնից: Յայտնի երե-
ւում է որ յարգելի գիտնականը չէ վստահացել անյի-
շատակ թողնել և ոչ մի փաստ լսգուտ իւր կարծիքի,
համոզուած լինելով՝ որ հակառակորդները դիւրաւ հա-
մոզուող չեն, սակայն ապացոյցների ոյժն այնքան ջախ-
ջախիչ է, որ այդ խնդիրն ընդ միշտ լուծուած պէտք
է համարել: Մի քանի մանր գիտողութիւններ այս մա-
սի մէջ յառաջ բերուած բացատրութիւնների մասին
աւելորդ չեմ համարում. § 8. եր. 13. լափել բառն
ըստ իս սխալ է ЛИЗАТЬ թարգմանել, դա ռամկական լե-
զուով կընշանակէ ուտել, կլանել (սովորաբար շան ու-
տելը լափել է կոչւում), այս բառիս համեմատութիւնը
պարսկերէն լափ բառի հետ շատ է ձգձգուած ու ան-
հաւանական է:

§ 25. եր. 31. Զրտուն ամեն ճշտութեամբ թարգ-
մանուած է water closet և բոլորովին կապ չունի ջրա-
ղացի ջրտան հետ:

§ 28. «խեռաբարոյ» ուղիղ չէ дражливый թարգ-
մանել, ըստ իս քիչ զանազանութիւն կալ խեռաբարոյի
և խեռաբարոյի միջև և արաբերէնի թարգմանիչն իրա-
ւամբ է թարգմանել малоумный. խեռ այժմեան մեր
գործածական գիծ բառի նշանակութիւնն ունի:

Գլ. Բ. Առակը Մխիթարայ եւ ժողովածոյք Վարդանայ:

Քննելով Մխիթար Գօշի անունով մնացած առակները ժողովածուն դժուարանում է պ. Մառը այդ առակները Գօշին յատկացնել, թէպէտեւ չէ պնդում հաստատութեամբ, թէ նրանք չեն, ըստ իս, Մխիթար Գօշի մասին Կիրակոսի վկայութեան մէջ առակների չըլիշատակուելն այնքան ևս զօրաւոր փաստ չէ և քանի դեռ ևս հակառակ վկայութիւն չըկայ այս ժողովածուն պէտք է Գօշին յատկացնել: Գրական տեսակէտով Մխիթարի առակները շատ բարձր են Վարդանայ առակներից թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ձևի: Այս առակների աղբիւր է համարում 1) բարոյախօսական գրութիւններն և 2) Եզովսոսի և արևելեան առակները: Գօշի անունան բացադրութեան (եր. 66, ծանօթ. 3) մէջ ալիք Էառի թարգմանութիւնը (СЪ РѢДКИМЪ БѢЛЫМИ ВОЛОСАМИ) կարծեմ թէ աւելի ստույգ լինի, եթէ ալիք հասկանանք միայն մօրուսը, բռնների նշանակութեանց պատմութիւնը շատ օրինակներ է տալիս մեզ այդպիսի փոփոխմանց:

Գլ. Գ. Ընդարձակ եւ համառօտ ժողովածոյք Վարդանայ առակների:

Քննելով մեր ձեռքն հասած բոլոր աղուեսագրերն ու առակագրերն ահագին զանազանութիւն է դնում նրանց մէջ, բոլոր ժողովածոյք 4 կաշի բաժանելով գտնում է, որ նրանց քանակութիւնն ևս աճում է հետեւեալ չափով.

1. ունին 20—80 առակ.

× ×
20 80

2. ,, 40 60

× ×
40 60

3. ,, 80—120

× ×
80 120

4. ,, 160—240

× ×
160 240

Բովանդակութեան գալով՝ քննութիւնից երևում է, որ այդ առակների մէջ կան Վարդանի երկից դուրս տարրեր, որոնք վերաբերում են զուարճաբանութեանց, ուստի և եզրակացւում է, որ զանազան հեղինակներ և դրիչներ խրատական ժողովածուներ են կազմել հետեւելով Վարդանին, որի անունը վերջն ընդհանրացել է այդպիսի ժողովածուների համար: «Աղուէսագիրք» անունան ծագումն անյայտ է մնում, երկու ենթադրութիւն կայ այդ մասին, աղուէսագիրք իբրև գիրք Սատանայի (աղուէս) որոգայթների կամ գիրք աղուիսու առակների:

Գլ. Դ. Առակք Վարդանայ.

Այս գլխում հմտութեամբ զտուած են բոլոր այն առակները, որոնք Վարդանին կարող էին պատկանել ըստ իրենց հոգեշահ խրատուց և ըստ կազմութեան. իսկ յաջորդ. գլ. Ե. -ում զտուած և որոշուած են յետագայ յաւելուածները: Հետազօտութիւններիցս պարզ երևում է է, որ Վարդանի առակների մէջ մուտք են գործել նիւթեր. Հարանց վարքերից, յայսմաուրքներից, բարոյախօսութիւններից, Եզովպոսից և Մխիթար Գօշից: Ինչպէս վերն լիշեցի գլ. Զ. և Է. վերաբերում են Այգեկցի Վարդանին և նրա երկին:

Գլ. Ը. *Բարոյախօս* (φῆξιςλογῆς). Այս հին թարգմանական առակների և Վարդանի առակների ժողովածուի փոխադարձ յարաբերութիւններն են պարզուած այս գլխում:

Եզովպոսի առակների հայերէն թարգմանութիւնը պէտք է անշուշտ գոյութիւն ունեցած լինի, սակայն այսօր չ'ունինք մենք այդ և ամբողջ նիւթը խառն է հայկական առակագրութեան մէջ. սոյս խնդրի ուսումնասիրութեան է նուիրուած գլ. Թ. մի առ մի թերթելով հայ հեղինակների երկերն ու հաւաքելով առակաբանութեան հետքերն ընտրում է նշանց միջից Եզովպոսի առակների մնացորդներն, որի ցանկը դնում է եր. 508. պատկեր XXXII-ի մէջ: Ուղմպիանու անունով մնացած առակների ծագումն իբրև Պիտոյից գրքի կորած մի գլուխ շատ սրամիտ է և ամեն հաւանակաւնութիւն ունի: Սրանով ահա բացատրւում է առակների

Ժողովածուի անհաստատ վիճակը: Մեր գրականութեան մէջ մի մեծ գործ կայ դեռ ևս կատարելու, ընտրել պէտք է բոլոր իբրև դպրոցական ձեռնարկ ծառայած գրքերն և զտել նրանց ապագայ շերտաւորութիւններից: Տասներորդ կամ վերջին գլուխը նուիրուած է արևելեան պատմութեանը և հայկական կենդանական վէպին, որոնց հաւանական մնացորդները գետնադել է մի ցանկում եր. 567—67. պատկեր XXXIII.

«Արի էջը ցեխից հանի՞ր» ասացուածի մեկնութիւնը (եր. 541) սրամիտ է թէև, բայց այդ ասացուածքը կապ ունի մի այլ առակի հետ, որ ես լսել եմ մեր յայտնի նկարիչ պ. Վարդգէս Սուրէնեանցից, որ երևի թէ Ժողովրդական աղբիւրից էր պատմում:

«Մի մարդ սովորութիւն է ունենում ամեն չնչին բանի մասին երկար մտածելու և հոգս անելու, ուստի մաշում է թէ իւր և թէ իւր կնոջ սիրտը, վերջապէս կնոջ համբերութիւնը հատնում է, առնում է իւր մարդուն և փակում մի մութ սենեակում, որ ոչինչ չը տեսնէ և չը լսէ: Յաջորդ օրը հազիւ թէ լոյսը բացուում է, որ ծառան գալիս է փողոցից ու բարձրաձայն հաղորդում տան տիկնոջ, թէ գրացու էջը մի քուռակ է ծնել անպուշ: Այս որ լսում է սենեակում փակուած մարդը, խորը յոգուց է հանում և ասելով. «արի հիմի էջը ցեխից հանի՞ր». մեռնում է:

«Այնքան ուրիշի համար հոգս անող է մարդս, որ մտածում էր, թէ քուռակը պիտի մեծանայ, բեռը պիտի կրէ, իսկ երբ ցեխի մէջ խրուի, հնար չը պիտի լինի նրան հանել ցեխից, որովհետև պուշ չունի, քանի որ սովորաբար իշուն ցեխից հանում են պուշից քաշելով, ահա այս հոգսն էր որ սպանեց խեղճին»:

Արդեօք այս առակից չէ՞ առնուած վերևի ասացուածքը, թէ՛ այս առակն ընդհակառակն յօրինուած է ասացուածի վրայ հիմնուելով:

Եր. 541. Առան տարան բրդի շուն:

Գունն լինջ տարան, բրդի շուն:

Կարծում եմ առաջին տողի «բրդի շուն» սխալ է թարգմանել оретъ песь, դա մի սովորական կրկնութիւն

է նոյն անուան երկու տողավերջին. առաջին տողավերջին կոչական է «բրդի շուն»:

Հայկական կենդանական վէպի մասին խօսելուս մոռացութեան է տուած արդեօք, թէ դիտաւորեալ է Յովհ. Մամիկոնեանի յառաջ բերած յայտնի շէրը.

„կերան գազանք զմարմինս դիականցն Վարազայ և դերացան.

Կուզ կերեալ, ուռաւ որպէս զարջ:

Եւ աղուէս հպարտ եղև քան զառիւծ:

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտին՝ չմնայ առինքն, մեռաւ:

Անգեղք, քանզի ագահք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ:

Մկունք, քանզի շատ կրեցին ի ծակսն, ոտքն մաշեցան:

Այս հատուածն անշուշտ հայկական կենդանական վէպի մասն է:

Այս հակիրճ զեկուցումից երևում է աշխատութեանս ընդհանուր նպատակը, բայց քանի՜ քանի՜ թանգագին ակնարկներ և ենթադրութիւններ ստիպուած եղանք լռութեան տալու:

Նոյնպէս լռութեամբ պիտի անցնենք երկու հատոր բնագրերի մասին, որոնք վկայում են այն հսկայական աշխատութեան մասին, որի շնորհիւ ամբարտաճ է հայ գրականութեան և լեզուի համար անհատնում պաշար: Հայ գրականութիւնը շնորհապարտ է պ. Մառին այսպիսի աչքի ընկնող վաստակի համար, որով դուռն է բանում ապագայ նորանոր հետազօտութեանց:

Ուռանց երկնչելու սագերի ինքնահաւանութեան առակից, կարող ենք պարծենալ, որ երբ Եւրոպայում սկսուեցան առակները մշակուել ու տարածուել, հայոց մէջ նրանցից անկախ նոյնը կրկնուեցաւ և հայ առակագրութեամբ օգտուեցան ասորիք ու վրացիք: Արդարև դիւ ռաճու եմք փոքր, բայց և ի մերումս աշխարհի գործեցան բազում գործք արժանի լիշատակաց:

Երկրորդ հատորի լիշատակարանը կարգալով՝—յակամայից լիշում ես մեր, ազգայնոցս կուրութիւնը. բայց նախ ահա այդ լիշատակարանը.

Փառք Աստուծոյ և Երրորդութեան

Յառաջին ամի Ամենայն ռուսաց Կայսեր Նիկողայոսի Երրորդ-
ի հայրապետութեան ամենայն հայոց կաթողիկոսի Մկրտչի առա-
ջնոյ, որ Հայրիկ բարուք ասի, յաւուրսն յորս ի մայրաքաղաքիս
հիւրընկալիւր հովիւ սրբազնագոյն հայկազեան ազգին, ի
թուականութեան հայոց ՌՅԽԳ, յամսեան մարերի յանգ հանաւ
տպեցումն տառիցս, որ է մասն երկրորդ, առատ ծախիւք Ա-
րմեհեան լեզուաց բաժնի Ս. Պետերբուրգի համալսարանի կայ-
սերականին և ջանիւք սպասաւորիս հայազիտութեան Ն. Մառի
որ աղաչեմ զհանդիպողսդ տառիցդ չարեաւ մի յիշէք զիս և
ակամայ սխալանացս անմեղադիր լերուք։⁽¹⁾

Յարգելի հեղինակն այս հիմնաւոր ուսումնասի-
րութեան համար արժանացաւ Մագիստրոսութեան պա-
տուին, որ և պարտք ենք համարում հանդիսիս կողմից
շնորհաւորել ու ցանկալ յարգելի գիտնականին նոյն
շաւղով դեռ երկար տարիներ գործել և լոյս սփռել մեր
հնութիւնների վրայ ալիսիս վճիտ հայեացքով, որ յա-
տուկ է միայն իրեն։

Ն. ԶԱՐԱՄԻԱՆՅ.

29 յունիս
1899 թ.

1) Վերջերս հրատարակուեցաւ Հայոց Հոգևոր Ներսիսեան
դպրոցի պատմութիւնը ծախիւք այդ հոգևոր դպրոցի, սակայն
այդ տպագրութեան վրայ դուք զուր կը փնտռէք թէ ո՞ր հայ-
րապետի ժամանակ, ո՞ր առաջնորդի օրով և դրանց որք՝ հրա-
մանաւ է տպուած այդ գիրքը։ Այդ գրքի յարգելի հեղինակ պ.
Ա. Երեցեանը չէր մոռնաւ այդպիսի մի իրողութիւն, սակայն
երևի թէ ճիշտ է, որ դպրոցի հոգաբարձութիւնն է վերացրել
այդ յիշատակարանը։ Այս համեմատութեան համար ներումն եմ
խնդրում յարգելի Ն. Մառից, իսկ հայ ընթերցողները անչուշտ
ուրախ կըլինին այդպիսի երևոյթներին տեղեկանալու։